



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն № 11-Ա

ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ն. Գաբրիելյանի դիմումը և համաձայն «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի՝

1. Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալ Նարեկ Գաբրիելյանին 2021 թվականի ապրիլի 8-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. Դատական դեպարտամենտի ղեկավարի առաջին տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել նույն դեպարտամենտի իրավական ակտերի մշակման և փորձաքննության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Հարությունյանին:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

2021թ. ապրիլի 8
ք. Երևան